

— Հայոց գընդին նախամարտիկ հեծեալ եմ ես ,  
Ի Ա արդանայ յըղեալ քաջէն՝ 'ի մեծ հանդէս .  
Երթամ՝ պուղել պղտորել ըզպեղծ Պարսիցըն ձամբար ,  
Հայոց քաջաց տամ հրաւեր Եմատունիս Եւանձար : —

( Օ րհնեալ 'ի տեառնէ դուդ եւ որք ընդ քեզ ,  
Հրեշտակը յարդարեն ըզձեր ասպարէզ .  
( Օ րհնեալ սուսերք քաջացդ հաստոյր  
Ծ ըթամբք հոգւոյս տամ ձեզ համբոյր .  
Ինդ հետո հեծելոցդ ըզփիրտս յուղարկեմ ,  
Ըզփոշիդ վերացեալ ըզգլխովս ածեմ .  
Ոնւրք եւ փառաւոր է քեզ ձանապարհ  
( Օ ն մտրակեա հաս , յաղթես Եւանձար :

Զիաւորեալ դառնային Հայք 'ի հանդէս  
Ի բուռն առեալ պիրկ դանդանաւանդ ,  
Լայր ահարեկ գունդըն Պարսից սեւատես .  
Դողայր թընդայր Հեր եւ Օ արաւանդ :

Հ Դ Ա

## ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄՊՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱԿԱՆ ԳԱՎԱՆԱԳ

Այս սև է նոր քաղաք շինեալ 'ի յետին աւուրս Հերակլի Բ արքայի Լախէթի և Վարթլայ , 'ի գաւառի ներքին Վիսեղի կամսահմանակից Լախէթի , յանդիման մեծի լերին Լովկասու 'ի հարաւային կողմաննէ նորա և Վաղան գետոյն , տասն մղոնաւ հեռի 'ի սմանէ և 'ի մայրաքաղաքէն Տիփսիսայ , անջրակետեալ երկաւուրք յարևելեան 'ի հիւսիսային կողմն նորա . կառուցեալ վասն Հայոց՝ որպէս և 'ի քաղմութենէն Հայոց նշմարի : Տեղի քաղաքին անհարժ զառ 'ի վայր ելեկէջ . օգն ամենամաքուր . ջուր աղբերացն վճիտ և ախորժ . բնակիցն բնականաբար յոյժ առողջք են և քաղաքավարք . Հայախօսք ամենեքին և քաղցրադիտակք և արք արթունք 'ի տուրեառո վաճառաշահութեան . ջերմեռանդք են և

կրօնասէրք և գաղթեալք յլըցախայ և 'ի Կանձակայ . և զամենայն ինչ հընարին առ 'ի անկորուստ պահել զհայրենին բարբառ . վասն որոյ և մեծաց գովութեանց արժանաւորք յաղագս այսորիկ : Խ հիւսիսային կողմն քաղաքին է բերդ մի ամրակառոյց և լայնատարած յոյժ , մինչև բաւական լինել 'ի հարկաւոր դէպս 'ոչ միայն բաւական զօրս յինքն ամփոփել , այլ և զըոլոր գաւառն ամենայն բնակչութեալ ժինքն , բազմաթիւ կրկնայարկ աշտարակս ունելով կառուցեալ 'ի նմին : Լայ յամրոցին և երկայնաձիգ լայնածոց վիշ մեծ , ընդ նմին և աղքիւր , և յոլով տունք և այգիք և եկեղեցի և ամբողջ թաղ մի վասն Հայոց :

Յառաջնումն նուագի 'ի գալստեանն զօրաց Ոտուսաց յաշխարհն Ա բաց և 'ի տիրապետեն յայսկոյս Լովկասու՝ արքայորդին Ա բաց Եղեքսանդր Բագրատունի՝ չխոնարհեալ զիջանել ընդ ձեռամբ տէրութեան Ոտուսաց , ըմբուտացեալ 'ի տէրութենէն՝ դեգերէր 'ի կողմն Ա եկաց և Պարսից և վրդովիւաց զիսաղաղութիւնն Ոտուսաց , և երբեմ

սասպատակ սփռէր աստ և անդ ուր և  
կարէր, թէպէտ միշտ պարտեալ տաղ-  
տապէր, և երբեմն Ա իրք ազգային խրմ  
բիւք աստ և անդ ուր և գտանէին զսա-  
կաւաթիւ զօրս Այսուաց 'ի վերայշար-  
ձակէին . որպէս և յաւուր միումժողո-  
վեալ սեւափետուր ազգին Ա բաց 'ի վե-  
րայ միոյ աշտարակի բերդիս այսորիկ, որ  
յարեւելս կոյս' ( և որ է եկեղեցի փոք-  
րիկ յանուն սրբոյն Ատեփանոսի ) զոր  
պահէին սակաւաթիւ զօրք Այսուաց,  
գոլով քաղաքիս ըստ ամենայնի ազատ  
'ի պաշարմանէ, և Հայոց տեղւոյն յիւ-  
րաքանչիւր գործս պարապեալ, քան-  
զի Ա իրք միայն պասքեալ էին արեան  
Այսուաց, 'ի վրէժ գրաւելց նոցա զեր-  
կիր իւրեանց : Պաշարեալքն զաւուրս  
ինչ քաջութեամբ մարտեան յաշտա-  
րակէ անտի, կամ լաւ ևս ասել յեկե-  
ղեցւոյն, և զի պակասեաց ջուրն՝ վասն  
որոյ և սկսան խօսիլ 'ի խաղաղութիւն  
ընդ թշնամեացն, զիտելով թէ 'ի Տըփ-  
խեաց չունին զյոյս փրկութեան, և  
քաջ ծանուցեալզանհաւատարմութիւն  
Ա բաց, և թէ առաջի կայ նոցա տա-  
նել վշտաց, սակայն լաւ համարեցան  
մատնիլ 'ի ձեռս ուխտադրուժ ազգին,  
քան 'ի ծարաւոյն չարաշար մեռանիլ  
յարգելարանի անդ, միայն այսու թէ-  
ութեամբ սկսան զգան, զի 'ի կող-  
մանէ Ա բաց յղեսցեն առ Այսուաց քա-  
հանայ մի երդնուլ վասն ապահո-  
վութեան կենաց իւրեանց : Հաւա-  
նեալ Ա բաց ընդ դաշնն՝ յղեն առ նոսա  
զքահանայ մի յազգէ իւրեանց, վասն  
երդնլց 'ի դիմաց իւրեանց և հաւա-  
տարմացուցանելց զնոսա 'ի դաշնադրու-  
թիւնն : Վահանայն Ա բաց մինչ գնաց  
առ նոսա, ընկալան զնա մեծարանօք, և  
գարձուցին յետս 'ինդրելով զի և քահա-  
նայ մի 'ի Հայոց յղեսցեն յերդնուլ, և  
երդմնազանց Ա բացիք կոչեալ առ ին-  
քեանս զմի քահանայ Հայոց հաւա-  
տարմացուցանեն և ասեն նմա թէ 'ի  
դիմաց մերոց երգութիր յանուն Ի ստու-  
ծոյ կենդանւոյ՝ զի յելանելն նոցա յաշ-  
տարակէ անտի չիք ինչ կասկած երկիւ-  
զի նոցա . և քահանայն Հայոց զգեստա-

ւորեալ եկեղեցական զարդուք ուղեսրի  
յաշտարակն, և 'ի տեսանելն Այսուաց  
խկոյն բանան զդուռն և բացազլուխ  
ընդ առաջ ելանեն քահանային՝ համ-  
բուրեն զաւետարանն որ 'ի զիրկս քա-  
հանային և զաջ նորա, և նա հաւա-  
տարմացուցանէ զնոսա յանուն Ա բաց  
չունիլինչ կասկած նեղութեան, վասն  
որոյ շահեալ զքահանայն դրամովք յետս  
առաքեն խաղաղութեամբ . և ինքեանք  
ելեալ 'ի տանիս եկեղեցւոյն, սկսանին  
զարքունի գանձն 'ի վերուստ 'ի վայր  
սփռել առ պաշարողս, կամեցեալ այսու-  
գութ արկանել 'ի սիրտս չարանենգ  
Ա բաց, և նոքա տեսեալ զրոհ տան մեծ  
ամերիխիւ և հաւաքեն զգանձնն : Եւ  
յետ այսորիկ բայցեալ զզրունս աշտա-  
րակին՝ զինաթափ և զլսիրաց ելանեն  
արտաքս հանդերձ զօրապետաւն առ  
նենգաւոր Ա բացիս . իսկ նոքա զինչ,  
որպէս զկատաղի յովազունս ծարաւիս  
արեան զիմեն 'ի վերայ անմեղաց և առ  
ետեղ զենուն օրպէս զուխարս անմեղս,  
և զնանակս արեանցն մինչեւ ցայսօր ցու-  
ցանեն յորմունս եկեղեցւոյն : Հետ ա-  
ւուրց ինչ այս համբաւ հասեալ 'ի Տըփ-  
խիս քաղաք, հասանէ անտի զօրապետ  
մի հանդերձ զօրօքն և Ա բացիք որ-  
պէս զծուխ առաջի հրոյ այնպէս ցնդե-  
ցան . սակայն այն եղեւ ողբոց արժա-  
նաւոր, զի եղկելիքն այնոքիկ կուր ե-  
ղեն գաւաճանաց, պատրեալք 'ի նեն-  
գուպատիր բանից նոցա . բայց և Ա բա-  
ցիք գլխովին ոչ մինչ 'ի սպառ զերծան  
'ի պատուհասէն, զի գլուխք գաւաճա-  
նացն առաքեցան 'ի մետաղս : Եւ յոքան  
առ այս : Տունք Հայոց 'ի Աղնախ են  
700, ամենեքին վաճառականք և ար-  
հեստաւորք, և արք Ճոխք . ունին զեր-  
կու եկեղեցիս զմին յանուն սրբոյն Այ-  
րապետի, իսկ զմիւսն յանուն սրբոյն  
Դէկորգայ 'ի ներքոյ պարսպի բերդին :  
Ետեղովէս երկեխ ընդարձակութիւն  
տարածութեան հովտաց մեծի լերինն  
կովկասու, գողցես մինչեւ յաշխարհն  
Եցուանից : Երկեղեցիք քաղաքիս Ճոխք  
են և վայելուցք, զարդարեալք եկեղե-  
ցական անօթովք և զրամովք քան զայլ

Եկեղեցիս Արաց աշխարհին . բաց յե-  
կեղեցեաց Տփխեաց :

Տունք Արաց են 12 թուով , և ունին  
զմի փոքր եկեղեցի յանուն սրբոյն Ատե-  
փանոսի , այն՝ զոր արեամբ զոհից ձեն-  
ձերեցին 'ի պարծանա՛ չասացից 'ի յա-  
ւերժական նախատինս ազդի իւրեանց  
և ժողովրդեան :

Այս բնակի ազգատոհմն մեծ Պահ-  
վերտենց՝ որ ազգասէր նախանձու վա-  
ռեալ ազատեաց յստրկութենէ զմեր-  
ազնեայ զքառասուն տունս յիշխանաց  
Արաց :

Կասօմիսար՝ էր յառաջն աւան՝ և  
այժմ փոքր մի հեռի 'ի Աղնախայ կէս  
ժամաւընդ զառ՝ ի վայրը լերինս ելւէջու-  
թեամբ . տունք Հայոց այժմ են 6 կամ  
7 . արք ոստայնանկը , ունին զմի գմբե-  
թազարդ փոքրիկ վանս յանուն սուրբ  
Աստուածածնի , ուր ուխտաւորք յա-  
ճախ գիմեն 'ի Աղնախայ :

Տօղբիսխև՝ այսինքն Տօղբէլայ խե-  
կամկոր , առեալ 'ի Տօղբէլ մետրապոլ  
տէն Արաց որոյ տուն բնակութեան  
մերձ է յայն տեղի . անդ է և մենաս-  
տանն , յորում և մարմին նորա կայ ամ-  
փոփեալ . և տեղիս այս պատկանի ընդ  
այլոց գիւղօրէից այնր վանաց , ուստի և  
յանուն նորա և ձորն անուանի . ընդ  
երկարութիւն այնր ձորոյ են և այլ գիւ-  
ղօրայք , եօթն կամ ութ թուով , և  
պարապին 'ի վաճառականութիւնս , իսկ  
Արք հողագործք են և այգեգործք :  
Տունք Հայոց են 120 , իսկ Արաց բա-  
զում յոյժ :

Գիմիթ՝ է մեծանիստ գիւղ Արաց .  
տեղին պատկանի եկեղեցւոյնոցա , վասն  
որոյ և բոլոր Արք գեղջս ստրուկ են  
եկեղեցւոյ իւրեանց : Տունք Արաց մին-  
չե ց800 , իսկ Հայոց 22 . Հայք են  
վաճառականք և արհեստաւորք և հո-  
ղագործք . բայց չեն ստրուկ ոչ եկեղե-  
ցւոյն և ոչ յիշխանաց :

Դանդաւոր էր գիւղ ինչ զառաջինն  
'ի գլուխ լերին , իսկ այժմ չուեալ ան-  
տի Հայոց իջին 'ի վայր՝ ի տափարակ  
տեղի և անդ շինեցին այլ գիւղ , յորում  
տունք Հայոց են 15 . անտեղեակ լեզուի

Հայոց , և ամենեքին հողագործք և ար-  
քանի ստրուկք : Ի հանդիսոյ գեղջն  
է լեառն և 'ի նմա կիսաւեր մատուռն  
զոր ոմանք Ուելէթ անուանեն և ոմանք  
Օհաղկավանք :

Լակաբէթ՝ է գիւղ եկեղեցւոյն Ար-  
քաց , և ժողովուրդքն ամենեքին Հայք  
և Արք ստրուկ եկեղեցւոյն այնորիկ .  
տեղին է արգաւանդ և բերրի , բնակիչքն  
առ հասարակ հողագործք և այգեպանք .  
տունք Հայոց 33 , և ունին զմի անյար-  
մար եկեղեցի :

Հայլուր է գիւղ Արաց . տեղին ար-  
գաւանդ և բերրի . տունք Հայոց 7 , և  
չունին զեղեցի :

Մանաւ է գիւղ ինչ հնագոյն քան  
զբազում գիւղորայս . տեղին է զառ 'ի  
թափ և անվայելուչ , և 'ի ժամանակս  
անձրեաց յոյժ դժուարագնալի են ձա-  
նապարհքն : ( )գն չէ գովելի , բայց այ-  
գիք յոլովք են 'ի սմա և գինին ընտիր  
քան զբազում այլոց գիւղորէիցն Արք-  
սեղի . տունք Հայոց 25 . ունին զմի  
հնագոյն բերրտ 'ի գագաթն լերին , որոյ  
և որմննք 'ի բազում տեղիս խոնար-  
հեալ կան . տունք և սենեակք չեն 'ի  
նմա : Ծունին Հայք զօրինաւոր եկե-  
ղեցի , այլ զմի փայտեայ անշուք եկե-  
ղեցի 'ի բերդի , նմանապէս զայլ միւս  
եկեղեցի 'ի շինամիջին :

Վագարէջ՝ է գիւղ Արաց բազմա-  
մարդ . տեղին յոյժ լայն անհարթ և  
բազմայգի . օգն է բարեյարմար և ջուրն  
ազնիւ . տունք Հայոց են 65 . պարա-  
պին 'ի վաճառականութիւնս և յար-  
հեստո . ստրուկք են արքունի , և ին-  
քեանք ձնիք և փարթամք . ունին զմի  
յարմարաւոր եկեղեցի կրապատ՝ բայց  
փոքր . տունք Արաց թուով 900 . յա-  
րեմնից գեղջս առ ափամբ հին պարա-  
պին անցանէ գեսն Խօր , որ յառատա-  
նան իւրում տայ բազում վնասս . այս  
գիւղ էր երբեմն ընդ հոգեոր տեսչու-  
թեամբ Ուելաւայ՝ բայց այժմ՝ է ընդ  
տեսչութեամբ Աղնախայ :

Աինօծմինդայ (թարգմանի նք 'Ար-  
քնէ) , է գիւղ Արաց յայնկոյս գետոյն Խօ-  
րի միով մղանաւ հեռի 'ի Աղարէջցէ .

Հայոց տունք 22 . ստրուկը են եկեղեցն լրաց , և ինքեանք հողագործք և այգեգործք , սոքա ևս չփիտեն զլեզու Հայոց և շունին զեկեղեցի :

Դիմուղորեք ինչ որ կան յայսմ միջոցի տեղւոյ , ոչ մուծան ՚ի ստորագրութիւն , քանզի յումանս են տունք 3 , յումանս 4 և յումանս 2 և կամ մի եւթ :

Ենագէ գիւղ Հայոց հեռի ՚ի Աղնեաց յարևմտեան կողմանէ նորա 5 մղոնաւ , տեղին է առողջարար և ջուր աղբերն բարեհամ և անուանի : Հայք են վաճառականք և արհեստաւորք և այգեգործք , յարևելեան կողմանէ զեղջնանցանէ փոքրիկ գետակ , և յայն կողմն է Ա պքիր գիւղ Հայոց և գրեթէ կից նմամիայն գետակաւն բաժանեալ . երկոքին այս գիւղքն ՚ի նորումն շինեցին զմի հոյակապ և երևելի եկեղեցի : Տունք Հայոց են 110 , և գիտեն խօսել զլեզու Հայոց :

Կարդանեխ՝ է գիւղ իշխանացն լրաց երկայնաձեւ դրիւք և այգեւէտ և գիւնին գովելի . տունք Հայոց 40 , ամենեքին հողագործք և այգեգործք , ըստրուկը են իշխանաց , և ունին զմի անշուք փայտեայ եկեղեցի :

Դուրջիհան՝ է գիւղ լրաց . օդն առողջարար և բարեյարմար , բազմայգի և արգաւանդահող . ընդ սմին համաթուին գիւղրայք մանունք՝ որք հովուին ՚ի միոյ ծխական քահանայէ Հայոց և բոլորն ՚ի միասին տունք Հայոց են 120 , ումանք ստրուկը իշխանաց և ումանք արքունի . գիտեն ումանք զլեզու Հայոց՝ զի գաղթականք են յլ բցախայ և ՚ի Գանձակայ : Ինդ մէջ Ճանապարհին Վուրջիհանու և լ ելիսցիսու է փոքրիկ ձորակ ինչ և ՚ի նմա կալաչափ տեղի ինչ լճակ , յոյժ խոր . ելանէ յորդութեամբ ՚ի տեղիս տեղիս իբրև եռացեալ ջուր՝ տիղմինչ մնիրագոյն՝ դառնահոտ իբրև զծումբ , թէպէտ և առասպելս ինչ յօդեն լրացիք , սակայն տեսաք և մեք ինքնին , զի բերեալ զբորոտ ձի և զգոմէշ արկանէին ՚ի տղմային լճակն , իբրև ՚ի գեղ ախտացելոց :

լ ելիսցիսայ՝ է աւան ինչ լրաց մե-

ծաղիր և լայնահարթ և բազմայգի . օդն ծանր յամարային եղանակի . առ հասրակ բնակիչք Հայք և Ա իրք ունին զերեելի այգիս՝ ումանք զօ , ումանք զէ , զն , մինչեւ ց10 , ուստի միաբանք են ամենեքին . Հայք՝ կից 2 յոյժ մանր գիւղօք՝ են տունք 200 , ամենեքին վաճառականք և այգեւեարք և բազմակալուածք , և ունին զմի յարմարաւոր եկեղեցի : Ինախնումն լեալ է անդ բարձրապարիսպ բերդ , որոյ նշանք երևին ըստ առաջին ձեռյն կանգուն . և նշանք փարթամ հարստութեան սորա յայտնի երևին ՚ի մնացեալ նշխարացն :

Յարևելեան կողմանէ Աղնախի հեռի ՚ի նմաննէ 30 մղոնաւ անկանի Ուուքուլի՛ արգարե տեղի ամենագովելի և մաքուր . և բազում իմաստութեամբ որուեայ կառավարութիւնն անդ շնել զտեղի բնակութեան զօրացն Ուուսաց և ըստ տարագու երկրաչափական եւրոպական արհեստից կանոնաձեակերպեցին զշնութիւնն : Ինակին անդ 6000 կամ 7000 զօքք Ուուսաց , վասն սահպանելց զՃանապարհն Ու եկաց ՚ի հարկաւոր գէպս : Իմանապէս Ն մղոնաւ հեռի ՚ի նմանէ գէպս ՚ի հիւսիս առ երի Վլազան գետոյ բնակին հեծելազորք վասն նոյն ասպատակաւոր Ու եկաց . յերկուս յայսոսիկ տեղիս բնակին քանի մի կրպակաւոր մերային վաճառականք :

Յայս վայր հասուցեալ զատորագրութիւն պատմութեան լրաց աշխարհին ,

ՅՈՎԱՅՐԱԿԱՆ Վ. ՏԵՐՂԱՉԱՄԵԱՆՑ  
ԱՐԾԱԿԱՆԻ

ԱՊՐԻԼ, 1849 ՅՒՆԻՏԱՐԻԱ: